Հաստատում եմ

Տնօրենի ժպ՝ Ա. Ղարագյոզյան « » օգոստոս 2022թ.

# Կողբի Բ. Սահակյանի անվան հ. 2 միջնակարգ դպրոցի

# 2022-2023

# ուս տարվա

# Աշխատանքային պլան

ՄԿԱ գծով փոխտնօրեն՝ Ա. Անանյան

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Դաստիարակությունը դժվար գործ է, և նրա պայմանների բարելավումը յուրաքանչյուր մարդու սրբազան պարտականություններից մեկն է, որովհետև չկա ավելի կարևոր բան, քան ինքն իրեն և մերձավորներին կրթելը:*

Սոկրատ

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի կարևորագույն ռազմավարական խնդիրն է, քանզի կրթության գերնպատակը անձի կայացումն է: Միևնույն ժամանակ դաստիարակությունը պետության պարտավորությունն է իր քաղաքացիների առջև՝ ապահովելու անձի լիարժեք զարգացումն ու ինքնադրսևորումը:

Դաստիարակության ոլորտի բացը ոչ միայն խոչընդոտում է երեխաների և երիտասարդների անձի կայացմանը, այլև խոցելի է դարձնում նրանց տարբեր սոցիալական և ապազգային ազդեցությունների նկատմամբ:

**ՄԿԱ գծով դպրոցի փոխտնօրենի աշխատանքն ընդգրկուն է և բազմաբնույթ:**

Գործունեության թիրախ խմբերն են՝

1. **Մանկավարժական աշխատողներ**
   - դասղեկներ
   - ուսուցիչներ
   - սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
   - դպրոցի հոգեբան
   - սոցիալական մանկավարժ
   - ներառական կրթության բազմամասնագիտական թիմ
2. **Աշակերտներ**
   - աշակերտական խորհուրդ
   - սոցիալապես անապահով երեխաներ
   - անցանկալի վարք ունեցող երեխաներ
3. **Ծնողներ**
   - ծնողական խորհուրդ,
   - ծնողական համայնք
4. **Արտադասարանական խմբակներ**
5. **Ղեկավար և սպասարկող անձնակազմ**

• գրադարանավար

**6. Պետական և հասարակական կառույցներ**

• ոստիկանություն (ոստիկանության՝ անչափահասների գործերով աշխատակից)

• հասարակական և միջազգային կազմակերպություններ

Ուսումնական տարվա ընթացքում կատարվող աշխատանքները պետք է նպաստեն՝

1. Կրթության հիմքի վրա ձևավորված մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների հետագա զարգացման ապահովմանը:
2. Քննադատական մտածողության զարգացմանը:
3. Մասնագիտական կողմնորոշման ապահովման և պարզ աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը:
4. Դրական վարքի ու բարեկիրթ վարվեցողության, կայուն և զարգացած արժեքային համակարգի ձևավորմանը:
5. Բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի հիմքերի ամրապնդմանը:
6. Հայրենիքի պաշտպանությանը իր մասնակցությունն ունենալու պատրաստակամության և հետագայում զինծառայության անցնելու կարևորության գիտակցման ձևավորմանը:

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

| Թիվ | Բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող անձ | Նշումներ |
|---|---|---|---|---|
| 1. | Ելնելով COVID-19-ի հետևանքով առաջացած իրավիճակից կազմակերպել միջոցառումներ ուսումնական տարին հավուր պատշաճի սկսելու համար,որից կբխի աշխատանքային հետագա գործընթացը ճիշտ կազմակերպելը:Այդ աշխատանքները կազմակերպել ԿԳՄՍՆ-ի և ԱՆ-ի ներկայացրած պահանջների: | Ըստ անհրաժեշտության | ՄԿԱ Փոխտնօրեն Դասղեկներ | |
| 2. | Գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառման այլընտրանքային անցկացում՝ ելնելով հակահամաճարակային կանոններից: | 14.09.2022թ | ՄԿԱ փոխտնօրեն | |
| 3. | Վերանայել նախորդ ուստարվա դաստիարակչական աշխատանքները և դրա հիման վրա կազմել նոր ուստարվա աշխատանքային պլան: | 03.09.2022թ | ՄԿԱ փոխտնօրեն | |
| 4. | Կազմել ժամանակացույց և իրականացնել հսկողություն աշակերտներին դասագրքերով ապահովելու համար : | 26.08-03.09.2022թ | Դասղեկներ ՄԿԱ փոխտնօրեն Գրադարանավար | |
| 5. | Դասասենյակների բաշխում և նախապատրաստում նոր ուսումնական տարվան | 02.09-11.09.2022թ | Դասղեկներ ՄԿԱ փոխտնօրեն | |
| 6. | Ներկայացված ուղեցույցի համաձայն դասարանները նախապատրաստել խմբերով աշխատանքներին:Բոլոր դասարաններում, միջանցքներում, սանհանգույցներում տեղադրել համապատասխան ախտահանիչ նյութեր՝ ձեռքերի և մակերեսների ախտահանման համար: | 02.09-11.09.2022թ | Դասղեկներ Տնօրեն ՄԿԱ փոխտնօրեն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7. | Դասղեկների աշխատանքային պլանների մշակման վերհսկում և ներկայացում (առցանց): | Սեպտեմբեր | Դասղեկներ ՄԿԱ փոխտնօրեն | |
| 8. | Համադպրոցական առցանց միջոցառումների պլանավորում և կազմակերպում: | Ըստ ժամանակացույցի | Տնօրեն ՄԿԱ փոխտնօրեն | |
| 9. | Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի առցանց ժամեր՝ աշակերտների բազմակողմանի դաստիարակության և առողջ կոլեկտիվ ձևավորելու նպատակով:Հետևել դրանց ճիշտ և նպատակային վարմանը: | Ուստարվա ընթացքում | Դասղեկներ ՄԿԱ փոխտնօրեն | |
| 10. | Անցկացնել հեռավար ծնողական ժողովներ՝ ընտրել ծնողխորհուրդ (նախագահ, 3-4 անդամ) | 14.09-16.09.2022թ | Դասղեկներ | |
| 11. | Կազմակերպել և անցկացնել հաստատության ծնողական խորհրդի ընտրություններ: Ծնողական խորհրդի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում | 25.09.2022թ | Տնօրեն ՄԿԱ փոխտնօրեն | |
| 12. | Ուստարվա յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում կազմակերպել և անցկացնել ծնողական խորհրդի առցանց ընդհանուր ժողով՝ ամրապնդելով աշակերտ-դպրոց – ընտանիք կապը: | Ըստ ժամանակացույցի | Տնօրեն ՄԿԱ փոխտնօերն ՄԿԿ | |
| 13. | Կիսամյակի ընթացքում հրավիրել առցանց ծնողական ժողովներ (2-3 անգամ): | Ըստ ժամանակացույցի | Տնօրեն ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Աջակցել դպրոցի ինքնավարությանը՝<br>1. Դասարանական խորհուրդների ձևավորում<br>2. Աշակերտական խորհրդի ձևավորում 3.Աշակերտական խորհրդի հանձնախմբերի ձևավորում (առցանց կամ առկա՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները) | Սեպտեմբեր | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |
| 15 | Կազմակերպել և անցկացնել աշակերտական խորհրդի նախագահի և ընտրական հանձնախմբի անդամների ընտրություններ: | Սեպտեմբեր, Հոկտեմբեր | ՄԿԱ փոխտնօրեն | |
| 16 | Ուստարվա ընթացքում դասղեկական ժամերից տրամադրել <<Աղետների և ռիսկերի նվազեցման կրթությանը>> : | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն | |
| 17 | Սեմինար-խորհրդակցություններ դասղեկների և ծնողների հետ՝ ըստ անհրաժեշտության առկա կամ առցանց: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ Ծնողներ | |
| 18 | Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը: | Պարբերաբար | ՄԿԱ փոխտնօրեն ԲՄԹ | |
| 19 | Կազմել և հաստատել ուսուցիչների հերթապահության գրաֆիկը՝ մուտքերի մոտ և հարկաբաժիններում: | 14.09.2022թ | ՄԿԱ փոխտնօրեն | |
| 20 | Աշխատանքային կարգապահությունը բարձր հիմքերի վրա պահելու նպատակով .<br>Սահմանված կարգի համաձայն՝<br>1.Յուրաքանչյուր սովորող և աշխատող դպրոցում լինի դասերը | Պարբերաբար | ՄԿԱ Փոխտնօրեն<br>Ախ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | սկսվելուց 20 րոպե առաջ՝ ըստ <<Աշխատանքային ժամանակացույցի>> հիմք ընդունելով՝ <<Ներքին կարգապահական կանոնները>> | | | |
| 21 | առաջ՝ ըստ <<Աշխատանքային ժամանակացույցի>> հիմք ընդունելով՝ <<Ներքին կարգապահական կանոնները>> | | | |
| 22 | Վերահսկողություն սահմանել ուշացումների և անհարկի բացակայությունների նկատմամբ: | Պարբերաբար | ՄԿԱ Փոխտնօրեն Դասղեկներ | |
| 23 | Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ: | Պարբերաբար | ՄԿԱ փոխտնօրեն Ախ | |
| 24 | Հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ: | Պարբերաբար | ՄԿԱ փոխտնօրեն Ախ | |
| 25 | Կազմակերպել սովորողների առցանց և առկա հանգիստն ու ժամանցը, հետևելով պարետատան,ԿԳՄՍՆ-ի սահմանած կանոնները : | Պարբերաբար | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկնե ր | |
| 26 | <<Ռիսկային խմբին>> պատկանող երեխաների,անապահով աշակերտների,կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների,միակողմանի ծնողազուրկ,բազմազավակ ընտանիքի,այլազգի ընտանիքի և արցախյան պատերազմի մասնակից ծնողներ ունեցող երեխաների | Սեպտեմբեր | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տվյալների բանկի ստեղծում: | | | |
| 27 | Կազմակերպել աշակերտների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեություն /առցանց/ | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ<br><br>ԾԽ | |
| 28 | 6-9-րդ դասարաններում կազմակերպել և անցկացնել առցանց բանավեճեր,քնարկումներ,որոնք կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն ԾԽ ԱԽ | |
| 29 | Արտադասարանական խմբակների ձևավորում և վերահսկում /առցանց/: | Սեպտեմբեր | Տնօրեն ՄԿԱ փոխտնօրեն | |
| 30 | Աջակցել խմբակի ղեկավարներին կազմելու թեմատիկ պլանները,լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցման մատյանները /առցանց/ | Սեպտեմբեր | ՄԿԱ փոխտնօրեն Խմբակների ղեկավարներ | |
| 31 | Անկախության 29-ամյակին նվիրված շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցադրում /առցանց/ և ռադիոհաղորդման անցկացում: | Սեպտեմբեր | ՄԿԱ Փոխտնօրեն<br><br>ԱԽ<br>Կերպարվեստի ուսուցչուհի | |
| 32 | Նանսենյան օրեր. անցկացնել դասղեկական ժամեր՝ նվիրված մեծ մարդասեր Ֆ.Նանսենին /առցանց/: | Հոկտեմբեր | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ ԱԽ | |
| 33 | Ծնողներին ներկայացնել իրենց երեխաների դպրոցական,արտադպրոցական գործունեությունը ինչպես նաև նրանց հաջողություններն ու ձեռքբերումները: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 34 | Համագործակցություն ոստիկանության անչափահասների գործերով համապատասխան աշխատակցի հետ: | Ըստ անհրաժեշտության | ՄԿԱ փոխտնօրեն Ծխ | |
| 35 | Աջակցել հասարակական կազմակերպությունների կողմից դպրոցում / առցանց և առկա / անցկացվող դասընթացների և այլ աշխատանքների: | Ըստ անրհաժեշտության | ՄԿԱ փոխտնօրեն Աշխորհուրդ | |
| 36 | Կազմակերպել և իրականացնել աշխատանքներ՝ երեխաների քաղաքացիական և բարոյական արժեքների ճիշտ գնահատման նպատակով /առցանց և առկա/: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Ախ | |
| 37 | Աջակցել հասարակական կազմակերպությունների կողմից դպրոցում / առցանց և առկա / անցկացվող դասընթացների և այլ աշխատանքների: | Ըստ անհրաժեշտության | ՄԿԱ փոխտնօրեն Ախ | |
| 38 | Երեխաների իրավունքների և պարտականությունների քննարկում և լուսաբանում: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Ախ | |
| 39 | Կարևորել մանկական տեսչության աշխատակիցների հետ համատեղ աշխատանքը և հաճախակի կազմակերպել միջոցառումներ /առցանց և առկա/: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոտնօրեն Ախ | |
| 40 | Երեխաների մոտ ձևավորել բարոյաիրավական հատկանիշներ /խիղճ,պատասխանատվություն,արդ արություն,պատիվ,արժանապատվու թյուն/ և այլն: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |
| 41 | Կազմակերպել միջոցառումներ՝ /առցանց և առկա/ հաշվի առնելով աշակերտների նախաձեռնությունները,ստեղծագործ ական տաղանդը և պահանջմունքները: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 42 | Աջակցել հասարակական կամ միջազգային կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների, դասընթացների և աշխատանքների իրականացմանը: | Ըստ անհրաժեշտության | Տնօրեն ՄԿԱ փոխտնօրեն Ուսումնական գծով փոխտնօրեն | |
| 43 | Կազմակերպել սովորողների դաստիարակչական,արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները՝ համագործակցելով դասղեկների հետ: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |
| 44 | Ուսուցչի տոնին նվիրված միջոցառում /առցանց/ | Հոկտեմբերի 5 | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |
| 45 | Դպրոցի բուժքույրերի կողմից իրականացվող զրույց-քննարկում՝ սանիտարահիգիենիկ պահանջների, ստեղծված իրավիճակում հակահամաճարակային կանոնների պահպան ինչպես նաև անձնական հիգիենայի վերաբերյալ: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն Բուժքույրեր | |
| 46 | Դպրոցի նյութատեխնիկական բազայի ուղղությամբ համագործակցություն դպրոցի տնտեսական գծով փոխտնօրենի հետ: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն ՄԿԱ փոխտնօրեն Տնտեսական գծով փոխտնօրեն | |
| 47 | Ուսումնասիրել աշակերտների հարմարավետությունը դպրոցին,դասարանին: Աշխատանք տանել առկա խնդիրների շուրջ: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն ՄԿԱ փոխտնօրեն | |
| 48 | Հայոց բանակին նվիրված շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքի ցուցահանդես /առցանց կամ առկա/: | Հունվար | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ | |
| 49 | Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյանը նվիրված միջոցառումներ,դասղեկ թումանյանական ժամեր /առցանց և առկա/: | Փետրվար | ՄԿԱ փոխտնօրեն Դասղեկներ ԱԽ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 50 | <<Գիրք՝ հավերժության բանալի>> ակցիա դպրոցի գրադարանի հարստացման նպատակով: | Փետրվար | Ուսուցիչներ<br>Դասղեկներ<br>Գրադարանավ<br>ար ուհի<br>Ախ | |
| 51 | Մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ: Ընթերցանության ժամ.ընթերցում են բոլորը: | Փետրվար | ՄԿԱ<br>փոխտնօրեն<br>Ուսուցիչներ<br>Դասղեկներ | |
| 52 | Ստեղծել և ապահովել դրական հաղորդակցման միջավայր՝ հնարավորություն տալ յուրաքանչյուր աշակերտին ազատ արտահայտելու իր զգացմունքներն ու կարծիքները ՝ զարգացնելով քննադատական մտածողությունը: | Պարբերաբար | ՄԿԱ<br>Փոխտնօրեն<br>Դասղեկներ | |
| 53 | Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ դասղեկներին:Նրանց ցույց տալ համապատասխան աջակցություն՝ աշխատանքների ճիշտ և արդյունավետ կազմակերպման համար: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն<br>ՄԿԱ<br>փոխտնօրեն | |
| 54 | Ապահովել և կազմակերպել ծնող-աշակերտ-ուսուցիչ-դպրոց փոխհարաբերությունը և կապերի ամրապնդումը: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն<br>ՄԿԱ<br>փոխտնօրեն | |
| 55 | Ուսումնասիրել աշակերտների կյանքի առաջնային և բարոյական արժեքները:Անցկացնել դասղեկական ժամեր՝ նվիրված բարոյական նորմերի պահպանման և զարգացման ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>փոխտնօրեն<br>Դասղեկներ | |
| 56 | Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության բարելավման ուղղությամբ:Կազմակերպել միջոցառումներ գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ<br>փոխտնօրեն<br>Դասղեկներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | /առցանց և առկա/: | | | |
| | | | | |
| 57 | Կազմակերպել բազմաբնույթ աշխատանքներ աշակերտների հայրենասիրական, գեղագիտական, ֆիզիկական, հոգևոր, բարոյական, աշխատանքային, քաղաքացիական դաստիարակության ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն<br>Դասղեկներ | |
| 58 | Աշխատանք տանել աշակերտների ինտելեկտուալ հմտությունների զարգացման ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն<br>Հոգեբան | |
| 59 | Ցուցադրել և ոգևորել դասարանի և դպրոցի աշխատանքներին ակտիվորեն մասնակցող ծնողների անհատական նախաձեռնությունները: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն<br>ՄԿԱ փոխտնօրեն<br>Դասղեկներ | |
| 60 | Ստեղծել ծնողների մասնագիտական բանկ և այդ տվյալներն օգտագործել <<Ծնողական համալսարանի>> դասընթացները կազմակերպելիս: | Ուստարվա ընթացքում | ՄԿԱ փոխտնօրեն | |
| 61 | Ուստարվա ընթացքում կատարած աշխատանքների վերլուծություն և ամփոփում: | Հունիս | Տնօրեն<br>ՄԿԱ փոխտնօրեն | |